

ԻՆՆԵՐՈՐԻՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պատրաստողները գիտեն են ուղղակի
Բագրատ. Քաճաւր, Մուսախան)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Վաղի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խմբագրատնիք բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՆԻԹԻՒՆ

Անգլիա և Հայաստան:—Ներքին տեսչի-
թիւնը, բժշկական օգնութեան կոմիտէն, Նախկին
Երևանից: Ներքին լուրեր:—Արաքսի տեսչի-
թիւնը, Գերմանիա: Անգլիա, Նախկին Թիֆլիսից:
—Վաղի և հեռագրեր:—Յայտարարութիւններ:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Լաւրոսայի բաղադրականութեան
փոփոխվելը սկսեց հետաքրքրել
հայերին ոչ թէ օտար ազգերի,
օտար շահերի վերաբերութեամբ,
այլ նոյն իսկ հայկական ազգի,
Տաճկահայաստանի գործի հետ
կապ ունենալու պատճառով: Եւս-
պէս որ, Գրանտայի մէջ պատա-
հադ պետական յեղափոխութիւնը
եթէ առաջ ժամանակ կը զբա-
ղէր հայի լոկ պատմական զգաց-
մունքը, որ նուիրված էր լինում
այս ինչ, այն ինչ օտար ազգին,
այժմ նոյն պետութեան մէջ կա-
տարվող միմյանորակ կրօնը
հետաքրքրում է հային այն պատ-
ճառով, որ նոր միմյանորակ
խմբի գործունէութեան պրօպագան-
դան աւելի շատ կամ աւելի բիւ-
է նպաստաւոր Տաճկահայաս-
տանի ակնկալութիւններին: Նոյնը
կարելի է ասել և իւրաքանչիւր
մեծ պետութեան մէջ այժմ պա-
տահոգ անցքերի համար, որոնց
հետ կապ է ստացել և քաղաքա-
կան մարմին մէջ ներքին գառնել
Տաճկահայաստանի խնդիրը: Նոյ-
նը տեսնում ենք ևս հէնց այս
րօպէ, աւելի զօրաւոր կերպով,
Եւրոպայի տղամարմին կուսակ-
ցութեան յաղթութիւնից յետոյ:
Եզատամիտ միմյանորակութեան
հաստատվելը Եւրոպայում, իւրա-
քանչիւր հայի սրտի մէջ ուրա-
խութեան բաբախում յարուցեց
վերջապէս կազմավորեց տաճկա-
հայերը այն կաշկանդված դրու-
թիւնից, որի մէջ պատում էր
նոցա Բիկօնսֆիլդի քաղաքակա-
նութիւնը՝ ասում է իւրաքան-
չիւր հայ: Թէպէտ Գլադստօնի
մօտազայ կարիքների պրօպագան-
դաւաքին քաղաքականութեան վե-
րաբերութեամբ, դեռ ոչ որին չէ
յայտնի, բայց որովհետեւ ընտրու-
ղական մարտման ժամանակ ա-
զատամիտ կուսակցութեան ան-
դամները զանազան ճառեր խօսե-

ցին և յայտարարութիւններ ա-
րեցին իրանց բաղադրութիւն ընտ-
րողների առաջ, վասն որոյ այդ
յայտարարութիւններից կարելի է
մտաւոր ճշդութեամբ հասկացու-
ղութիւն կազմել և այն ընթաց-
քի վրա, որ կը բռնէ Եւրոպայի
նոր միմյանորակութիւնը իր արտա-
քին քաղաքականութեան մէջ,
ինչպէս և Տաճկահայաստանի գոր-
ծի վերաբերութեամբ:

Մեր կարծիքով միշտ սխալ
բան կը լինի մտածել, ինչպէս այդ
անում է ռուսական մամուլի մի
մասը, թէ անգլիական ազատա-
միտ կարիքներ այնպիսի մի կրա-
ւորական դիրք կը բռնէ իր ար-
տաքին քաղաքականութեան մէջ,
որ երբեք չի ակնորժի, Եւրոպայի
շահերի համար, սորա, նորա գը-
լին ընկող կոտորել: Ուշափ էլ
համեստ և խաղաղասէր բնաւ-
ութեան տէր մարդիկ լինէին
Եւրոպայի ազատամիտ կուսակ-
ցութեան ներկայացուցիչները, բայց
միթէ կարելի է հէնց մի րօպէ
կասկածել որ նորա այնչափ կար-
ճամիտ են, որ չեն հասկանում
այն, ինչ հասկանում է իւրաքան-
չիւրը մեզանից՝ չեն հասկանում,
որ Հնդկաստանի statu quo ուշի
ուշով պահպանելը ներկայացնում
է Եւրոպայի գոյութեան ամենա-
անհրաժեշտ պայմանը: Վասն ո-
րոյ ասել թէ նոր միմյանորակութիւնը
անխառ և անմազ գեր կը կատարէ
արեւելքի գործերի մէջ, նուիրելով
իրան ներքին գործերին, մեր կար-
ծիքով մի անհեթեթ րօպէ-
կա է, քանի որ իսկական Եւր-
ոպան ոչ թէ ծովերով պատած
երեք միացած տէրութիւնների մէջ
է, այլ դուրսը՝ Հնդկաստանի
մէջ...

Ուրեմն Գլադստօնի միմյան-
որութեան պրօպագանդայի մէջ, ա-
րեւելքի քաղաքականութիւնը ան-
շուշտ այնպէս ստորագծված
կը լինի, ինչպէս այդ եղել է և
ընկած միմյանորակութեան ժամանակ
և միշտ, ի հարկէ այն զանազա-
նութեամբ միայն, որ ազատամիտ
կարիքներ ուրիշ միջոցներ և ու-
րիշ եղանակ կընտրէ իր նպատա-

կին համեմուն համար, բան թէ
իր նախորդ կարիքներ: Օրինակ,
փոխանակ ստոր ինտրիգաների,
խրոխտ դիպլոմատիական շփաբե-
րականների, սպառնալիքի, որոտ-
մունքի ու ցնցողական միջոցների,
նոր կարիքներ անշուշտ աւելի
նախապատիւ կը համարէ պարզ
խօսքը, անկեղծ յարաբերութիւն-
ները, խաղաղաբարոյ, բայց հաս-
տատամիտ որոշումները: Փոխա-
նակ փոքր ազգերին արհամարեղ
և նոցա անհատական ձգտումները
խափսնելը, ազատամիտ կարիքներ
անշուշտ աւելի խելացի և նպա-
տակայարմար կը դառնէ ոչ թէ
ճշնելով աւելի լարել նոցա յուզ-
ված տրամադրութիւնը, այլ միայն
բաւարարութիւն տալով և գրա-
ւելով նոցա սիրտը:

Եսպէս է ազատամիտների
հայեացքը ներքին պոլիտիկայի
Իւրանդիայի պահանջների վերա-
բերմամբ, նոյնը կը լինի և Թիւր-
քաց Հայաստանի նկատմամբ:
Եւրոպայի նոր միմյանորակութիւնը
դարձեալ կը շարունակէ ամեն
շանք թափել Թիւրքիայի դրու-
թիւնը ամրացնելու համար, իր
սեփական շահերի հարկադրու-
թեամբ, միայն այդ նպատակին
նա կը դիմէ ոչ թէ արթնացած
ազգերի ձգտումները խեղդելով,
այլ նոցա արդար պահանջները
կատարելով և նոցա շահերը հաշ-
տեցնելով Թիւրքիայի շահերի
հետ... Մեր հասկացողութեամբ,
այսպէս կը լինի ազատամիտների
յաղթութեան արդիւնքը Տաճ-
կահայաստանի վերաբերմամբ:

Բայց ի՞նչ կանեն Կ. Պոլսի
ազգային քաղաքականութեան զե-
կավարները, մամուլի ներկայացու-
ցիչները, quasi դիպլոմատները...
Նոքա կը շարունակեն այնպէս
վարվել այնպէս շարժվել, այնպէս
դէպքից օգուտ քաղել ինչպէս
մինչև հիմայ, ինչպէս Լաւրոսի
անցեալ զաղթականութեան ժա-
մանակ, ինչպէս և այժմեան սովի
ժամանակ, ինչպէս և միշտ միշտ
անգլուխ, միշտ շղկված, միշտ լե-
զուն փորը գցած և շամփուր
կուլ տուածի նման աչքերը խլշ-

քած... փոխանակ որոշ պրօպագան-
դայի, հաստատ ընթացքի: Եւր-
դեօք Կ. Պոլսի ազգայինները կը
մնան դարձեալ այն խենթ մար-
դարէնների առաջնորդութեամբ,
որոնցից մինը չորս տարի առաջ
Հայաստանի փրկութիւնը Եւր-
ոպայի գաղթելու մէջ էր տես-
նում...

Կը յուսանք որ վերջապէս Կ.
Պոլսի մեր ազգայինները ուրիշ
տեսակ կը շարժվեն և Հայաս-
տանի ինքնավարութիւնը իրագոր-
ծելով կը զաղթեն Հայաստան
իրանց մեռելած ժողովքն էլ
մէջքերը շարկած, Հայաստանի
հողի վրա նորան կենդանութիւն
տալու համար: Կապրենք, կը տես-
նենք...

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԿՕՄԻՏԵՍ ՎԱՍԻ
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ

Ինչպէս երևում է վաղի սովի դէմ միջոց-
ներն օրըստօրէ առաւելանում են, մեծ յոյ-
սեր կան ի հարկէ, որ նրանք կը կրկնապատ-
կվեն, կիւսապատկվեն և առաւել ևս կը
շատանան: Ազատում ենք, որ և պ. Ա.
Ամիրխանեանի առաջարկութիւններն կիրա-
գործվեն տնտեսական (Մշակ № 44): Շատ
ցաւալի է միայն, որ ինչպէս հաղորդում է
ռուսաց կօնսուլ Կամարսկանը (Մշակ №
43), սովը տատկանալով ամում է, 150 մե-
ռածներ կան, մինչև 3 հարիւր մանուկներ
հիւանդացի են, Իրիմեան հիւանդանոց է
ձեռնարկում հիմներ: Պ. Կամարսկանը օգնու-
թեան ձեռք է առաջարկում այն մարդանէր
հիմնարկութեան համար: Յայտնի է, որ
սովի ժամանակ մահացանութիւնը առաւել-
անում է ոչ թէ լոկ սովից միայն, այլ այն
տարափոխիկ հիւանդութիւններից նոյնպէս,
որոնք ծագում են սովատանջ ժողովրդի մէջ:
Այս հիւանդութիւններից, ինչպէս թանկաբ-
(дизентерия), ընդհարութիւնը (чума), բա-
տանքի և երակների վնասվելը, գլխաւոր և
առաջին տեղն է բռնում բժաւոր տիֆը
(пятидневный тиф), որ շատ փոխադրական և
փարակիչ է: Մեր կըսողներին և քոյրերին
սպառնում են այսպէս այժմ մի կողմից սովը,
միւս կողմից նրանից յառաջ եկող հիւան-
դութիւնները: Ուրեմն որքան անշուշտ հար-
կաւոր են սովածները կերակրելու միջոցները,
նոյնքան, եթէ ոչ առաւել ևս, հարկաւոր է
որ շուտով բժշկական օգնութեան ձեռք մեկ-
նենք վանդիկներին, որ փոխադրական հի-
ւանդութիւնները չը սաստկանան և չը տա-
րածվեն ամբողջ վանում և նրա շրջակայ-
քում: Ու՛մ պարտաւորութիւնն է անմիջապէս
սկիզբն առն այս գործին, եթէ ոչ մեր բոլոր

